ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (17 մայիսի 1992 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»

Սրտիս խորքից փառք և գոհություն եմ ընծայում առ Բարձրյալն Աստված, որ ինձ առողջություն շնորհեց և կարելիություն ընծայեց կյանքումս մի անգամ ևս բարձրանալ Միածնաէջ Սուրբ Խորան և աղոթք անել առ Աստված մեր ամենասիրելի Վեհափառ Հայրապետին՝ Ամենայն Հայոց Վազգեն Ա. Կաթողիկոսին, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի միաբանության և ամբողջ մեր Հայաստան աշխարհի և հայ ժողովրդի համար:

Այսօր մեր Եկեղեցու կարգադրության համաձայն Երևման խաչի տոնն ենք նշում մեր եկեղեցական շարականներով և ավանդությամբ: Խաչի խորհուրդը մի անգամ ևս մեր մտքում և հոգում վերակենդանանում է, և ես կուզենայի մի քանի խոսքերով առաջին հերթին այս խորհուրդին անձնական կյանքի մեջ ունեցած իմաստը և ազդեցությունը բացատրել:

Պողոս առաքյալ Գաղատացվոց ուղղված իր թուղթի մեջ ասում է. «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Դուք լավ եք իմանում, որ քրիստոնեական մեր հավատքի և բարոյական հասկացողության դիմաց պարծանքը, ինքնատեսությունը, ինքնազգողությունը թույլատրելի երևույթներ չեն:

Աստուծո Հոգին իր մեջ ունեցող մարդը և այս հոգու համաձայն ապրող մարդը Աստծուց բացի ուրիշ ոչինչով կարող է պարծենալ: Մենք ամեն ինչում Աստծուն ենք պարտական: Բայց Պողոս առաքյալ մի բացառություն է անում, ասում է. «Ինձ քաւ լիցի ուրիշ ոչ մի բանով պարծենալ, քան միայն մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի խաչով»:

Բոլորս էլ իմանում ենք, որ խաչը խորհրդանիշն է քրիստոնեության:

Մենք մեր կյանքում հաճախ խաչ ենք անում: Խաչը մեր սրտից ենք կախում, խաչին երկրպագություն ենք անում, խաչով ժողովուրդն ենք օրհնում, խաչը եկեղեցիների գագաթներին ենք բարձրացնում, խաչը գերեզմանաքարերի վրա ենք փորագրում և գերեզմանաքարերը խաչքարերի վերածում: Ամեն տեղ, որ քրիստոնեական հավատքն ենք արտահայտում, խաչն ենք իբրև խորհրդանիշ գործադրում: Բայց պիտի ասել, որ մենք այնքան սովորական ձևով ենք հաճախ մոտենում, մեքենական ձևով ենք մոտենում,

որ մոռանում ենք խաչի խորհուրդը: Զևականորեն խաչ ենք անում, առանց անդրադառնալու, թե այս մեր խաչ հանելու արարքը ինչ իմաստ ունե մեր կյանքից ներս:

Սիրելիք, խաչը եղել է Քրիստոսից առաջ և եղել է որպես պատժական, մահապարտության, դատապարտված մարդկանց մեռցնելու գործիք: Քառաթև փայտի վրա խաչում էին այն մարդկանց, որոնք ծանր քրեական հանցանք էին գործել կրոնքի, ազգի, պետության դեմ և չարչարալից մահով էին նրանց պատժում: Խաչը պատժի գործիք էր: Բայց այն անձը, որ ոչինչով պարտական էր, այն անձը, որ ոչինչով մեղավոր էր, այն անձը, որ ինքն անմեղն էր, հանկարծ այդ խաչի վրա բարձրացավ, խաչի վրա գամվեց,—խաչը դադրեց պատժագործիք լինելուց և եղավ փրկության գործիք, եղավ պատիվ, որովհետև եղավ սիրո արտահայտություն, զոհողության, ամենից տպավորիչ, ամենից ազդեցիկ առարկան:

Հիսուս խաչի վրա չբարձրացավ ինքն իրեն համար: Խաչի վրա բարձրացավ մարդկանց համար, մարդկանց մեղքերի համար, իր վրա առավ բոլոր մեղքերը, նա, որ անմեղն էր՝ Աստվածորդին: Եվ մեղքերը գամեց խաչին, խաչին տվեց ուրիշ խորհուրդ՝ փրկության խորհուրդ:

Մեր Եկեղեցու ամենեն խորունկ աստվածաբանության միտք ունեցող վարդապետներից մեկը՝ Գրիգոր Տաթևացին, մի տեղ ասել է. «Փառքն Աստուծոյ նախ խաչ է»: Ով ուզում է Աստուծո փառքին հասնել, պետք է գնա խաչի ճամփով: Եվ ես հաճախ հարց եմ տվել. բոլոր ուրիշ կրոնքների մեջ սիրո գաղափար կա: Փիլիսոփայական մտածողությունների մեջ անգամ սիրո գաղափար կա: Սիրո գաղափարը Քրիստոսով չէր, որ եկավ աշխարհ: Նրանից առաջ կար սիրո գաղափարը: Բայց մինչ ուրիշ կրոնքներ ունեն սիրո գաղափարը, քրիստոնեությունն է միայն, որ ունե խաչ՝ սիրո գերագույն արտահայտություն, անձնազոհության ճանապարհով՝ սիրո արտահայտություն: Ով կսիրի Աստուծուն և նմանին և կամ ուրիշ արժեքներին, և այդ բոլորի համար զոհողության պատրաստ չէ, նրա սերը անկեղծ չէ, վավերական չէ:

Մեր վարդապետներից Հովհաննես Երզնկացին, Պլուզ կոչեցյալ վարդապետը, Ավագ հինգշաբթի օր Ոտնլվային կարդացվող մի սիրո ճառ ունե և այդ ճառի մեջ ասում է. «Եթե դու ասես, թե Աստծուն, որին չես տեսնում, սիրում ես, բայց չես կարող սիրել եղբորդ, որին տեսնում ես, քո սերն իրական չէ»: Աստուծո սերը կանցնե մարդկանց սիրո միջից: Ով Աստծուն սիրի, չի կարող մարդուն ատել, դա հակառակն է սիրույն: Եվ խաչը գերագույն արտահայտությունն է այդ սիրո արտահայտության, անձնազոհ, անձնատու, անձնդիր զոհողության խորհրդանիշն է:

Այսօր, սիրելի հավատացյալներ, խաչի խորհուրդը ես ուզում եմ առընչել, զուգորդել այն կարևորագույն արարքին հետ, որ կատարվեց անցնող այս շաբաթվա ընթացքում հենց Հայաստանում և Ս. Էջմիածնում: Այստեղ անցնող շաբաթ, Ս. Էջմիածնի մեջ, տեղի ունեցավ Հայ Եկեղեցու թեմական առաջնորդների մի համախմբում, հանդիպում, խորհրդակցական ժողով՝ նախագահությամբ Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի: Աշխարհի չորս կողմերից թեմական պատասխանատվություն ստանձնած հոգևորականներ եկել էին այստեղ՝ Վեհափառ Հոր առաջնորդությամբ մտածելու միասնաբար, թե ինչ պետք է անել և ինչպես պետք է գործել, որպեսզի Հայաստանի Հանրապետության Վսեմաշուք Նախագահի հաստատած կամ ծրագրած «Հայաստան»

Համահայկական Հիմնադրամը գոյանա և մեր ժողովրդի բարիքին ծառայե: Եվ ես էլ հատկապես եկա թե՛ Վեհափառ Հայրապետի հրավերով, թե՛ մեր հանրապետության նախագահի հրավերով, միակ նպատակ ունենալով՝ միասին խորհրդակցել, թե ինչպես կարող ենք միասնաբար, համահայկական ջանքերով, ներդաշնակ գործունեությամբ այնպես զորացնել, ամրացնել, ապահով ճանապարհի մեջ դնել և զարգացնել մեր նորահռչակյալ ազատ, անկախ Հայաստանի Հանրապետությունը: Անցնող երեք օրերին Երևանում Վազգեն Վեհափառ Հայրապետը և ես մասնակցեցինք այդ Հիմնադրամի գոյացման համար և նրա մատակարարման, նրա գործունեության ղեկավարման համար հանրապետության նախագահի կողմից կյանքի կոչված հոգաբարձուների խորհրդի անդրանիկ ժողովին: Երեք օրեր շարունակ, կողք-կողքի նստած պետական անձանց հետ, և մեր ազգի կյանքի մեջ պատասխանատվություն ստանձնած կազմակերպությունների անդամների հետ միասին, մենք ծրագրեցինք, միասին խորհրդակցեցինք, հատուկ կանոնադրություն որդեգրեցինք և մի ճանապարհ գծեցինք, որպեսզի հառաջիկայում մի այնպիսի մնայուն գործունեություն ստեղծվի, որում ամեն մի հայ, որտեղ որ էլ գտնվե, Հայաստանում կամ Սիյուռքի որևէ մի անկյունում, իր հայության պարտքն զգա հայրենիքի հանդեպ, ազգի հանդեպ, անհետաձգելի պարտքն զգա ամեն տարի կամավոր իր մասնակցությունը բերելու, իր տուրքը տալու մեր հայրենի պետության զորացման նպատակին, գերագույն նպատակին, նվիրականագույն նպատակին:

Պարտքն ուրիշ բան է, և պատահական նվերն՝ ուրիշ բան: Պարտքը մեր գոյության հետ է խառնված, նվերը մեր կամքի հետ է կապված: Եվ այդ մեկը՝ Համահայկական Հիմնադրամը, ինչպես Վեհափառ Հայրապետն է ասել, և արդեն իր գործածած բառերն եմ կրկնում այժմ, ո՛չ հանգանակություն է, ո՛չ նվիրատվություն է և ո՛չ էլ բարերարություն է: Դա մեր վզին պարտքն է իբրև հայ: Մեր անունի տուրքն է մեր հայրենիքի հանդեպ, մեր բնական կապվածության բնական արտահայտությունը: Եվ ես կհավատամ, որ մարդ էակը կմեծնա ու իրական ճշմարիտ մարդ կդառնա բանականությամբ և պարտքի գիտակցությամբ: Ով պարտք չի զգա ուրիշի հանդեպ, ո՛չ քրիստոնյա է և ո՛չ էլ հայ: Ով ինք իր համար կապրի միայն, ով իրմով կապրի միայն, նա չի կարող քրիստոնյա լինել: Որովհետև ես չուզեցի երկարել իմ խոսքի առաջին բաժինը: Կարող էի ձեզի ներկայացնել Հիսուսի մտածումը խաչի մասին, թե ինչ է ասել. «Ուզում ես իմ ետևից գալ, վերցրու խաչդ և եկ զկնի իմ»: Ով որ խաչ չի կարող վերցնել իր ուսին, չի կարող Հիսուսի հետևորդ լինել: Հետևաբար՝ ով որ պարտականություն չզգա ուրիշի հանդեպ, հայրենիքի հանդեպ, Եկեղեցու հանդեպ, Աստծու հանդեպ, ի՞նչ տեսակ էակ է այդ մարդը:

Եվ աշխարհի մի փիլիսոփա, շատ մեծ փիլիսոփա՝ գերմանացի Կանտը, որ իր մտածումով ջանաց հերքել Աստուծո գոյության գաղափարը, և Աստուծո գոյության համար տրված փաստերը փորձեց հերքել, բայց գիտեք, բոլոր փաստերն էլ իր հաշվարկով զուտ տրամաբանական փոփոխությամբ կարծեց, թե հերքեց, բայց իր կյանքի վերջավորության մի խոսք ասաց և այդ գրվեց իր գերեզմանաքարի վրա: Նա ասաց. «Երկու բան ինձ համոզեցին Աստուծո գոյությունը՝ աստեղազարդ երկինքը գլխիս վերև և պարտականության ձայնը հոգուս մեջ»: Աստուծո ներկայությունն է պարտականությանն զգացումը: Ինչպես Հիսուս խաչի վրա մեր մեղքերը քավելու համար հանձն առավ զոհվել, մենք էլ պետք է գիտենանք մեր հայրենիքի համար,

մեր Եկեղեցու համար, մեր ազգի համար զոհաբերվել ոչ թե պարագայաբար, ոչ թե կամավոր կերպով, այլ շարունակական ձևով, բնական բխումով: Եվ նույնիսկ առանց որ մարդիկ գան մեզնից խնդրեն, մենք գնանք և ասենք. ահավասիկ իմ պարտքը: Այս է մտածումը այս Հիմնադրամին, այս գաղափարով և այս ծրագրով: Սա հանգանակություն չէ և տարբերվում է երկրաշարժի առիթով եղած հանգանակություններից կամ նվիրատվություններից: Սա ազգային հայրենական տուրք է: Ամեն մարդ իր շահերից իր կարողության չափով տա: Բայց տա, չմնա հեռու: Որովհետև պարտքը կատարող մարդն է պատիվ ունեցող մարդը:

Հավատացյալներ, եթե ուզում եք խաչապաշտ ժողովուրդ լինել, եթե ուզում եք խաչակիր ժողովուրդ լինել, և նրա մեջ պատիվ եք տեսնում, հետևաբար կատարեցեք ձեր պարտքը, ձեր սերը Աստուծո տված այս հողին՝ Հայաստանին: Եվ պատմության մեջ մեր ժողովրդի երազանքին, մեր ժողովրդի ձգտումին պատասխան եղող ազատ, անկախ հանրապետությունը ամրացնելու համար ամեն ինչ անենք՝ գերագույնը մեր պարտականության:

Ահավասիկ ինչպես երբևէ Պողոս առաքյալն ասաց. «Քավ լիցի ինձ պարծել, բայց միայն ի խաչ Տեառն Յիսուսի Քրիստոսի»: Եկեք մենք այսօր ևս ասենք. «Տեր, մենք միայն պարծանք եթե ունենք, դա մեր Եկեղեցին է, քո տված ընծան՝ մեր հոգու փրկության համար: Ով Տեր, եթե մենք պարծենալու մի առարկա ունենք, դա մեր երկիրն է՝ մեր հայրերի քրտինքով, մեր հայրերի շնորհքով, մեր հայրերի ստեղծագործությամբ, մեր հայրերի արյունով նվիրականացած այս հայրենիքը, որ այժմ կանչում է իր բոլոր զավակներին՝ ես ձերն եմ, դուք եղեք իմ մասնակիցը, մշակողը, զարգացնողը, հառաջացնողը:

Ահավասիկ ինչ մտորումներով ես ուզում եմ այս կիրակի Վեհափառ Հայրապետին ձեռքին միացնել իմ ձեռքը: Հիմնադրամի գաղափարը և ծրագիրը դնել Միածնաէջ խորանին առաջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հայցել Աստծուց, որ օրհնե այս նոր նախաձեռնությունը, եզակի, աննախընթաց նախաձեռնությունը մեր Հայաստանի Հանրապետության, մեր Եկեղեցու: Նման բան չի եղել սրանից առաջ իր տեսակին մեջ: Հետևաբար եկեք իբրև հայ ժողովուրդ արժանացնենք զայն և Աստուծո օրհնանքին առաջ դնելուց հետո մեր ձեռքերով շենացնենք այս երկիրը, ուժեղացնենք Հիմնադրամը և ասենք աշխարհին.—Մենք արժանի ենք Աստծուն և արժանի ենք մեր պատմության ներկային, ապագային այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: